


**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ**

ԴԱՍՏԱՐԱԿՆԵՐՈՒ ՊԵՏԲԸ

1927-28ի ուսումնական տարեշրջանն ալ բոլորեիլ է վերջ բնական կերպով մեզի կը ներկայանայ սա հորցը թէ ի՞նչ է մեր կրթական վիճակը, որն իր մանրամասնութիւններովը պէտք է լուրջ նկատուի թե՛ հաստատութիւնները ոչ-հաստատուն հանգամանք մը կը ներկայացնէին, իբր ընդհանրական մէկ արդիւնքը կեանքի անբնական պայմաններուն։ Ուրախանալի է տեսնել թէ ներկայիս լուրջ ջանքեր անպակաս են կրթական դործը աւելի հիմնական գիտնի մը վրայ հաստատելու։

Կրթութեան մը չափանիշը չ'որոշուիլ ուսումնական ծրագրին աստիճանէն, ո՛չ ալ այդ ծրագիրը գործնականացնելու համար պէտք եղած մէջոցներէն, այլ զայն ջամբող դաստիարակներէն։ Դպրոցը այն է ինչ որ է դաստիարակը։ Հետեւեալ դաստիարակներու պատրաստութիւնը կրթական գործին է՝ն կարեւոր մէկ խնդիրը կը կազմէ։

Մեզի հասած գրութիւններու մէջ յայտնի ակնարկումներ կան մանկավարժ և փորձառու ուսուցիչներու պակասութեան մասին։ Զօռնիք հաստատութիւններ որոնցմէ կարեւանք պէտք եղած կրթական ոյժերը ստանալ։

Ուրախանալի է տեսնել մանչերու և աղ-

ջիկներու երկու բարձրագոյն վարժարանները, ուրախանալի է նոյնպէս լսել թէ ծրագիրներ կը մշակուին Հայ Առաջնորդարանի կողմանէ Կոլէճ մը հաստատելու համար։ Բայց ասոնց չըջանաւարտները եթէ չօժտուին դաստիարակի մը համար պէտք եղած յաւելեալ ուսումներէն, — մանկաբանութիւն, մանկավարժութիւն, պատմութիւն, մանկավարժութեան, հոգեբանութիւն և այլն — չեն կրնար պէտք եղած արդիւնաւորութեամբ գործել։ Բայց քանի որ ներկայիս զուրկ ենք այսպիսի ուսումները աւանդող հաստատութիւնէ, մը ուսումնական խորհուրդները, հոգաբարձութիւնները, ուսուցիչները պէտք է խորհին ամառնային դասընթացք մը բանալու, ուր պատրաստ լաւագոյն ոյժերը իրենց կարելին ընեն այս պակասը լրացնելու համար։ Ուսուցիչները կրնան պարբերական հաւաքոյթներ ունենալ կրթական նիւթերու շուրջ բանախօսութիւններ լսելու, խորհրդակցութիւններ կատարելու։ Հոգաբարձութիւններ կրնան ասոնց օգնել պէտք եղած մի քանի կրթական թերթեր և գիրքեր հայթայթելով, որոնք այնքան շատ են օտար լեզուներու մէջ։ Մեր կրթական մշակները պէտք է օժտուին նորագոյն գիտական, կրթական ուսումներով և մեթոտներով, պէտք է անոնք ժամանակին հետ համընթաց քալին յաջող և արդիւնաւոր դպրոցներ ունենալու համար։

Տ. Ճ. Խ.

307ՈՒԱՄՆԵՐ

ՃՇՄԱՐԻՏ ԵՐԱՆՈՒԹԻՒՆԵՐ

Երանութեան չափանիշը ոչ կերածնեւութեան քանակն է, և ո՛չ ուրակը: Եթէ երանութեան չափն ու կշիռը ստամոքսի յանձնուած ըլլար, այն տաւն աշխարհի ամենէն նուիրական վայրերը՝ արմաթիւ շտամարանները և ուտեստեղէնի մասանները պիտի ըլլային: Ուրեմն հարցումը այն չէ թէ մինչեւ այժմ ստամոքսը ի՞նչ և ո՞րքան բաներ բովանդակած է, այլ այն թէ՝ այդ բաները բառին բարձրագոյն աստուծովը, ո՞րքան կեանքի ոյժի և նկարագրի փոխուած են:

Լայնածիր ովկիանոսները, ահաւոր ջրվեժները, բարձրաբերձ լեռները, կանաչագեղ հովիտները, հնութեանց թանգարանները, կենդանական պարտէզները, գիւղերն ու մայրաքաղաքները, ազգերն ու անոնց մեծամեծները, թող իրենց անջնջելի տպաւորութիւններովը նկատուին յիշողութեանդ մէջ: Տես աշխարհը, որքան ուր կրնաս: Բայց կը սխալիս եթէ կարծելու ըլլաս թէ միայն տեսածներդ են որ քեզ աշխարհի երանելիներուն շարքը պիտի դասեն: Երանելի ևս այն տաւն երբ տեսածներդ աշխարհահայեացքդ կ'ընդարձակեն, երաւակայութիւններդ կը սրեն, խորհուրդներդ կը բարձրացնեն ու կը խորացնեն, դատողութիւններդ կը չափաւորեն, ու քեզ լայնամտութեամբ օժտելով՝ մարդկութեան՝ և մարդկութիւնը քեզի կը մօտեցնեն:

Պեթովէնի, Հանտէլի, Մոցարդի և Հայտընի շունչին, և եկեղեցական ու թատերական բեմի աստղերուն շողին տակ տաքցիր, թռչուններու թռիչդ դաշլաշլուսով, ու վտակներուն քաղցրահնչիւն կարկաչիւնով գինովցիր: Ի՞նչ մեծ առանցնաշնորհումներ են ասոնք: Բայց անոնք այն տաւն երանելի պիտի ընեն քեզ երբ հոգիդ աշնուացնեն, զգացումներդ փափկացնեն, ճաշակդ նորացնեն, և քու մէջդ գութի, կարեկցութեան և մարդասիրութեան ոգին արծարծեն:

Պահ մը սա ամպերը գիտէ: Նայէ թէ ի՞նչպէս ծովէն ըմպած ու յագեցած կը բարձրանան ու վարդապոյն բեհեղներու նման կը տարածուին երկնակամարին վրայ: Բայց հոն չեն մնար: Այլ՝ յորդահոս անձրեւներու վերածուած ցամքած երկիրները կ'ողողեն՝ սը-

նունդ ու զեղեցկութիւն սփռելով ամեն կողմ:

Ահնարկդ պահ մըն ալ սա երկնաբերձ լեռներուն շուրջը կեդրոնացուր: Նայէ թէ ինչպէս օրերով և շաբաթներով սեւ ամպերու ծոցին մէջ բնկողմանելէ յետոյ՝ ձիւնապատ գագաթներով դուրս կուգան: Բայց ժամանակ մը՝ կապոյտի կուրծքին վրայ ճերմակ շուշանիլու պէս փայլելէ յետոյ, կը խոնարհին դաշտերն ու հովիտները, զեփուտին շունչով՝ այրած ճակատները զովայնելու գուլալ աղբիւրներու ու ջրնջ վտակներու փրփրալից վէտվէտուլներով ու հանգստարար զլլաւնքներով՝ մարդոց հաց, թռչուններու երգ, ու ծաղիկներու թոյր ու բոյր տանկու համար:

Դարձիր ու հետեւէ Աստուած-Մարդուն: Երան մը կողքին, ժայռի մը ներքին ծունր դրած, գիշերային մութին մէջէն հոգիին աչքերը Լուսոյ գահը յայտած, յափշտակուած է: Կը յագեցնայ վերէն...: Բայց հոն չի մնար: Ահա՛, Պաղեստինի կիզիչ արեւ ճակտին, կեցած է հասարակ մարդոց մէջ, ու քաղցածնեւուն՝ հաց, կոյրերուն տեսողութիւն, խուլներուն լսողութիւն, լացողներուն միխթալութիւն, մեղաւորներու թողութիւն, թշնամիներու սէր սօ եղբայրութիւն կը շնորհէ ու կը քարոզէ:

Իրապէս երանելի ու մեծ հոգիներուն ընթացքը միշտ այդ եղած է: Վերացում, յագեցում, ու յետոյ նուիրում, սէր ու զոհարարութիւն:

Արթնցի՛ր, ելի՛ր ուրեմն, գի երկինք ու երկիր քեզի կ'ապասեն: Երկու աշխարհներ՝ ձեռքերնին բացած շուրջդ կը գառնան, մէկը գանազան ու թանկագին շնորհներ բաշխելու, իսկ միւսը՝ քու ընդունած շնորհներուդ բոժնեկից ըլլալու համար: Դուն իրապէս երանելի ևս այն տաւն երբ այս երկու աշխարհները քեզի համար միեւնոյն ուժգնութեամբ ու եռանդով կրնան բացազանչել ու ըսել, «Ապկայ իմն է»:

Արեւի

ՎՏԱԿ

ՔՐԻՍՏՈՍ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍ

Զ.

Քրիստոնէական դարու մեծ գրողներէն քիչեր կան՝ որոնք իրենց գրութիւններուն մէջ ունէ զնահատում կամ ահնարկում մը ըրած

ըլլան Յիսուսին մասին: Զարմանալի է որ Շէյքսպիր այս բացառութիւններէն մէկն է:

Վիճելի հարց մըն է թէ արդեօք Շէյքսպիրը կաթոլիկ էր թէ Բողոքական, երկու կարծիքներն ալ փաստող կէտեր կրնան գտնուիլ: Ինչ որ ալ ըլլայ այն նիւթին մասին անոր լռութիւնը լուսաբանութեան կը կարօտի: Ուսուցչապետ Սթըպս կը կարծէ որ ասոր պատճառը այս է, — Կ'երևի թէ Մաքրակրօն Անգլիոյ պաշտօնական աստուածաբանութիւնը «Հիմնուած է այնպիսի Քրիստոնէութեան մը վրայ, որմէ Քրիստոսին անձնաւորութիւնը կատարելապէս անհետացած ըլլալ կը թուի:»

Նախկին Անգլիական Բողոքականութեան մասին տրուած այս վճիռը լրջօրէն խնդրոյ առարկայ կրնայ ըլլալ, բայց ինչ որ ալ ըլլայ այս մեկնութիւնը զոհացուցիչ չի տեսնուիր: Աստուածաբանական խիստ վէճերը անշուշտ Յիսուսի մասին պայծառ հայեացքներ չեն պարզեր, և շատ հաւանական է որ այդ տեսնի երիտասարդ Մաքրակրօնութեան խըստաբարոյ հանգամանքը թատերադրութեան հակառակած ըլլայ: Բայց այս Շէյքսպիրի լռութիւնը բոլորովին չի բացատրեր: Մա կարծիքը յայտնուած է որ անոր պատճառը, զոնէ մասամբ, պէտք է վերագրել այն իրողութեան՝ թէ այդ օրերը դերասանութիւնը այնպիսի ձեռքերու մէջ կը գտնուէր որ ակնածու հոգի մը պիտի խուսափէր Յիսուսի անունը բերմը հանելէ: Եթէ այսպէս է, բանաստեղծի լռութիւնը շատ պարզ է հասկնալ: Բայց մենք գիտենք որ անուագն անոր պատճառը ո'չ տգիտութիւն էր և ո'չ ալ զանցառում: Ան կարգ մը հատուածներու մէջ քրիստոնէական քառութեան վարդապետութեան կ'աղնարկէ: Բայց ասոնցմէ աւելի զօրաւոր են քրիստոնէական բարոյականութեան ճշմարիտ ոգիին մասին բանաստեղծին տուած վկայութիւնները: Երբ այն կը պնդէ «Ներողութեան աստուածային ըլլալուն, մշտական գութի, տեսական համբերութեան, մըշտանջնական աղնութեան, մտածումի և շարժառիթի անարատ մաքրութեան, չար բաներու մէջ բարութիւնը գտնող հոգիի մը յստակատես ըմբռնումին, արդարութեան նախախնամութեան մասին անվրէպ հասկըցողութեան, բարձրագոյն ճշմարտութեան վկայելու վեհափառութեան» մասին Շէյքս-

պիր ինքզինքը իբր Քրիստոնեայ մը կը ներկայացնէ: Յիսուսի մասին իր վկայութիւնը, թէպէտ աւելի անուղղակի, բայց նուազ զօրաւոր չէ քան ուրիշներունը, որոնց զընտհատումը աւելի որոշ կերպով յայտնուած է:

[Շարունակելի]

Տ. Ճ. Խ.

ՀԱՂԷՊԻ ՀԱՅ ԱՒԵՏ. ԵԿԵՂՅ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

3. Հայկաթի Հայ Առե. Եկեղեցիի մեք աշխատող ձեռնարկեալ և ոչ-ձեռնարկեալ պաշտօնակներ:

1. Տր. Նըթինկ առաջին ձեռնարկեալ միսիօնար:

2. Մաքքան Նաղար, Այնթապցի, առաջին ոչ-ձեռնարկեալ քարոզիչ:

3. Վեր. Սարգիս Սարգիսեան, Անաիտքի առաջին հովիւ:

4. Վեր. Կարապետ Մարգարեան, Ատանայի, Ատանայի եկեղեցիի հովիւ, 4 տարի:

5. Դարձեալ Վեր. Ս. Սարգիսեան, 8 տարի:

6. Տիար Գէորգ Դազանճեան, ոչ-ձեռնարկեալ:

7. Տիար Կարապետ Ատալեան, Մարաշցի, իբրեւ ուսուցիչ և քարոզիչ:

8. Տիար Գրիգոր Զուգուրեան, Այնթապցի, ուսուցիչ և քարոզիչ:

9. Տիար Դարեգին Գույումճեան, Մարաշցի և Աստուածաբանականի աշակերտներէն:

10. Վեր. Մանուկ Միսիրեան, Այնթապցի:

11. Վեր. Ստեփան Թովմասեան, Ուրֆացի:

12. Վեր. Յովհ. Էսքիճեան, Ուրֆացի, Բէնապի էքիզօլուգ Բէօրքինէ եկեղեցիի հովիւ ձեռնարկուած, և յետոյ Հալէպ գալով մէկ ու կէս տարի գործելէ յետոյ Ընդհանուր Պատերազմի միջոցին, 1916 Մարտ 25ին ժանտախտի զոհ դնաց: Ասկէ ետքը, եկեղեցին տեսն մը առանց քարոզիչի մնաց և Կարապետ էֆ. Էթմէքճեան և երբեմն ալ Զօրապճի Սարգիս կը քարոզէին: Վեր. Յ. Էսքիճեանի մահով եկեղեցին առանց հովիւի մնաց և պատերազմի տեսն շէնքը թուրք կառավարութեան կողմէ կրեք ու կէս տարի հիւանդանոցի վերածուեցաւ և հոգևոր պաշտամունքները զագրեցան:

13. Ներկայ հովիւը՝ Վեր. Կ. Յ. Յարութիւնեան՝ Զէյթունցի, Մարաշի Աստուածաբանականի ուսուցիչ: Անգլիացիք Հալէպը գրաւելէն ետքը 1919 Փետրուարի սկիզբը՝

ցին խրախուսուեցաւ և ինքզինք նիւթապէս անկախ հրատարակեց: Յիշեալ թուականէն հետք ունեցաւ իր երկսեւ վարժարանը, մանկապարտէզը, կիր. Գարոցը, իր հովիւը և իր որոշ պիւսակներ:

Կիլիկիոյ Հայ Աւետ. Միութեան տարեկան ժողովներու մէջ Հալէպի Աւետ. գործին մասին միշտ խօսակցութիւններ կ'ըլլային, առանց որոշ եզրակացութեան: Այսպէս Հալէպ մնաց Աւետ. գործի տեսակէտով երկրորդական գաղտ մը:

(Շարունակելի)

Կ. Յ. Յ.

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ

ԼԻՍՏԱՆԻ ՔԱՐԸ

Միքայէլ Անժէլօ Ֆլօրէնս քաղաքին փողոցներէն անցած պահուն մարմարի կտոր մը կը նշմարէ, մարմարը անվարժ ձեռքերով գործածուած, աւրուած և ապա իրր անարժէք բան՝ նետուած էր աւերակի մը մէջ:

Մարմարը ամենաընտիր տեսակէ էր: Անտարակոյս արուեստագէտներէն շատերը տեսած և հիացած էին անոր գեղեցկութեան վրայ, սակայն աւրուած ըլլալով որեւէ բանի չէին ծառայեցուցած: Այսպէս հոն կը կենար ան, մերժուած, աւրուած և անպէտ մինչեւ որ Միքայէլ Անժէլօ տեսաւ զայն, և մէկէն նշմարեց գեղեցկութեան կարելիութիւնը անոր մէջ:

Հիմա եթէ մէկը Ֆլօրէնս այցելէ, գեղարուեստական վսեմ գործերէն մէկը որ հոն պիտի տեսնէ պիտի ըլլայ՝ Անժէլօի քանդակած «Երիտասարդ Դաւիթ»ի արձանը:

Սակայն այդ հրաշալի արձանը քանդակուած էր աւրուած և լքուած քարէն:

Նմանապէս շատ մը կիանքերու մէջ վսեմ կարելիութիւններ կը գտնուին, բայց անոնք ապականուած և մէկ կողմ ձգուած են, ոչ մէկը լաւ բան մը կ'ակնկալէ անոնցմէ: Յետոյ Յիսուս կ'անցնի անոնց քովէն, իր ամենատես աչքերը կը նշմարեն գեղեցկութեան կարելիութիւնները, մարդկային վեհ կեանքի մը տարրերը: Այսպէս Յիսուս վեր կ'առնէ զանոնք փոշիէն և կը բարձրացնէ զանոնք մինչեւ որ անոնք ցոլացնեն իր դէմքին գեղեցկութիւնը:


Թարգ. Պ. Լ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱՆՁԵՐՈՒ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ

ՎԱՐԺԱՐԱՆԸ

Մ. Բ. Վարժարանի տարեկան գաղտահանդէսը կատարուեցաւ Մայիս 23ին, զրպրոցի մարզավայրին մէջ: Իսկ ատենամարդանքի հանդէսը կատարուեցաւ Յունիս 22ին Ազիզիյէ Հայ Աւետ. Եկեղեցիի սրահին մէջ: Խուռն բաղմունքին մը արդէն լեցուցած էր շէնքը երբ եղանակով մը հանդէսը սկսաւ: Զորս լեզուներով արտասանութիւններ, նըւագներ երգերի և ջութակներու եւ սրինգի մասնակցութեամբ, մրցանակաբաշխութիւն յայտագրին մասերը կը կազմէին: Արտասանութիւններու մէջ աշակերտները եռանդ, ոյժ, զգացում ցոյց տուին բայց անտեղի զայրոյթի, դառնութեան ու վշտի անբնական արտայայտութիւններ, պոռալու միտումներ ուշադրութենէ չվրիպեցան: Յայտնի էր թէ արտասանողները իրենց լաւագոյնը ընելու համար շատ աշխատած էին: Նուագները մասնաւոր փայլ մը տուին հանդէսին:



Մ. Բ. ՎԱՐԺԱՐԱՆԻ ԳԻՇԵՐՈՐԹԻԿՆԵՐՈՒ ԲԱԺԻՆԸ

Վերջացող տարուան մէջ զպրոցը յայտնի կերպով յաւաքդիմութիւն ցոյց տուաւ: Այս շրջանին մասին գրելով տնօրէնը Տր. Ճ. Մէրիլ կ'ըսէ. —

Մանչերու Բ. Վարժարանը 1923ին 33 աշակերտներով գործի սկսաւ. ատկէ ի վեր ամէն տարի զպրոցին թէ աստիճանը եւ թէ աշակերտութեան թիւը բարձրացաւ, այնպէս որ ներկայիս բարձրագոյն կարգը Գիւլէճի Սօփօմօրին կը հաւասարի, իսկ աշակերտութեան թիւը եղած է 211 որուն 27ը գիշերօթիկ:

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՍԵՌ՝ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ

Ազգ. Երկսեռ Վարժարանները, տեղւոյս կրթ. Հաստատութիւններուն մէջ կարեւորագոյն գիրքերէն մին կը գրաւէ, տրուած ըլլալով 750ի մօտ աշակերտութիւնը, 4 տարուայ Մանկագարտէզի, մէկ տարուայ Նախապատրաստականի և վեց տարուայ ալ Նախակրթարանի շրջանները: Դպրոցականներէն տարին անցած է խաղաղ և ներքին կարգապահութեան շուրջ դժուարութիւններ երեւան ելած չեն, շնորհիւ փորձառու ուսուցիչներու աշակուրջ հսկողութեան:

Աշակերտութեան մէջ ուսման հանդէպ ակնկալուած հոանդը և ոգեւորութիւնը կարելի եղած չէ միշտ վառ պահել և ասիկա դժբաղդ պարագայ մը եղած է: Խորհելով որ, այս դժուարութիւնները զգալի եղած ըլլալու են տարրեր վարժարաններու մէջ ալ, կ'ուզեմ Պատ. Տնօրէնութեանց և Ուսուցչ. Մարմիններու և ծնողած ուշադրութիւնը հրաւիրել: Իմ խոնարհ կարծիքովս, ներկայի աշակերտութիւնը ա՛յնքան ջերմ եռանդով չ'աշխատիր իր դասերուն և պարտականութիւններուն համար, որքան որ կ'աշխատէին նախապատրաստական իրենց մեծ եղբայրներն ու քոյրերը: Թէ ինչո՞ւ ներկայիս աշակերտները չեն աշխատիր:—

Ա. Նախ ընդունինք որ, ներկայիս ծնողները չունին և չեն կրնար իրենց զաւակաց հայթայթել այն գիւրազանցիկ պայմանները, զորս կը վայելէին պատերազմէն առաջ: Բնորոշինք որ, մեր աշակերտներէն որոշ տոկոս մը չեն կրնար բաւարար անունդ ստանալ, չունին սիրտողութիւն ընելու համար դիւրութիւններ եւ երբեմն ալ անբարոյացնող շրջաններու մէջ—Որպէսին է Վրանաքաղաքի կեանքը— անոնք զբոսած են մտամոլոփ սերտողութիւն ընել կարենալու, հոգիով ազնուանալու պատեհութենէն: Ասիկայ ցաւալի իրականութիւն մըն է:


Բ.—Մեր մանչերը չափազանց տարուած են խաղամոլութենէ, այնպէս որ, անոնք դասալահերէն կորզուած ամէն մէկ բոլէն ֆուքսի զաշտի եւ խաղի մասին կը խօսին եւ կը մտածեն: Այս մոլուցքը զիրենք սառն անտարբերութեամբ մը վարակած է դպրոցական պարտականութեանց և դասերու հանդէպ:

Ետինքի արձակումներէն վերջ, աստուան պայծառ և յստակ մտքի պահերուն և նոյնիսկ կէսօրուան զաղարին անոնք խաղաղայրերու մէջ են, ֆուքսիով կ'ըլլային, անոր կաշիով կը մտատանջուին, կաշիով կը հետաքրքրուին և զանոնք կ'երազեն: Մարդանքի օգտակարութիւնը ուրացող մը չիմ, սակայն ներկայ կացութիւնը կատաղի մոլութեան մը աստիճանին հասած և ուսման ու դպրոցական կեանքին վտանգաւոր հարուածներ տալու դրութեան մը յանդած ըլլալով, աննշմարանցիկ առնուազն մեղապարտ լուծութիւն մը պահել պիտի նշանակէր:

Գ. Գալով աշակերտահիւներու բաժնին. հոս ալ ուրիշ վերք մը կայ թարախոտ: Գիշերային այցելութիւններու (սանիտ. ընել) անհանդուրժելի սովորութիւն մը գոյութիւն ունի բնիկ Հալէպցիներու քով. ըստ որում մենք ալ այլեւս Հալէպցի եղանք Սիւրիահպատակ, չնայած մեր ճգնիմ եւ ողորմելի նւթական կացութեան, չնայած աւուր հաց մը ճարելու համար մեր կրած աշխատանքներուն, կանք մենք Հայերս ալ ընդունեցինք սանիտ. ընելու այս սովորութիւնը, բայց այդ սովորութիւնը ունեցող Հալէպցիներուն մօտ խածցնելու աստիճան փառաւոր անսակով, երգով, պարով, ծեփով եւ ծեփակեփով (եթէ կը ներսի ինձ) «Դոնց զոլիսնու սուսիս սանիտ» պէտք էր: Գիշերները հայաբնակ տուններու և թաղերու մէջ այս է կացութիւնը, ուր մեր ազնիկները, աշակերտահիւք ըսել կուզեմ, ամեն գիշեր տուն մը երթալով սանիտանուր կը մասնակցին, կ'երգեն, կը պարեն... ո՞վ ինչ պիտի ընէ նստիլ դաս սորվիլը. ֆեթ կ'անեն և այդ բաւական է, սալօնի օրիորդ մի ըլլալու համար: Այս յոյժ ցաւալի պարագան կը յանձնեմ պատ. ծնողներու ուշադրութեան, թախանձելով որ, եթէ իրենք պիտի սիրեն զիշերային այդ այցելութիւններու գրութիւնը, գէթ թող խնայեն իրենց զաւակներուն եւ հետերին չքաշքըշեն զանոնք, ձգելով որ խեղճերը կարենան դասերին սորվիլ, անհրաժեշտ քուններին քնանալ, հետեւեալ օրը դպրոցին մէջ չմրափելու և պատրաստուած գալու համար:

ՆՇԱՆ Պ. ՍԱՍԹՃԵԱՆ

Տնօրէն Ազգ. Երկս. Վարժարանաց.



ՄԱՆՁԵՐՈՒ ԲԱՐՁՐԱԳՅՈՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ

Բնագիտութեան դասին համար նոր գործիքներու ապահովումը ուսանողներու համար տարրաբանութեան աշխատանոցի մը և իւր քարձրախօսով միասին Բախոյի մը հաստատումը, օտար լեզուները խօսելու մէջ կատարուած դարգացումը, տպաբանի և հիւսնութեան բաժնին մէջ աշակերտներու կատարած տնտեսական աշխատանքը այս տարւոյն մէջ տեսնուած յայտնի յառաջդիմական քայլեր են:

Բարձր կարգերու մէջ կրօնական, մարմնամարզական, ընկերային և զբոսական գործունէութիւնները կատարուեցաւ աշակերտներու պատասխանատուութեան տակ: Պատասխանատու մասնախումբերը հինգշաբթի օրերուն ժողովները, ընկերային երեկոյթները սարքած և մարմնակրթական գործին հսկած և մարզիչներուն օգնած են: Ուսանողական պատուիրակութիւն մը մասնակցեցաւ Պատկապի Ուսանողական Ժողովին, և ուրիշ խումբ մը աշակերտներ Պէյրութ վայրին միջ-դպրոցային մրցումներու մասնակցելու:

Հալէպի մէջ Բող. նախնական վարժարաններու հետ եղած համաձայնութեան համեմատ անոնց ուսումնաւարտները պիտի կրնան առանց քննութեան դպրոցին առաջին դասարանը մտնել:

Բարձրագոյն Վարժարանը ուրախութեամբ կը փափաքի թղթակցիլ ուրիշ դպրոցներու հետ ալ նման կարգադրութեան մը համար:

Պէյրութի Ամերիկական Համալսարանը

ազնուօրէն պատրաստակամութիւն յայտնած է՝ յետ այսու դպրոցիս Ե. դասարանը աւարտող աշակերտները առանց քննութեան ֆրէշմէն կարգին ընդունելու համար:

Մ. Բ. Վարժարանը կրթութիւնը մատչելի ընկու համար իւր տարեվճար իրական ծախքերուն հազիւ կէսը և մէկ երրորդը կը պահանջէ: Այս թոշակները վճարելու անկարող աշակերտներուն ալ զործ կը հայթայթուի, իսկ վարի կարգերու աշակերտներուն նպաստներ կը յատկացուին: Գիշերօթիկ բաժնին համար վճարումները կարելի եղածին չափ ցած կ'որոշուին. բայց այս բաժնին բոլոր ծախքերը պէտք է վճարուին գիշերօթիկներու կողմէն, քանզի այս բաժնին համար տրամադրելի դրամ չունինք: Իրենց ուսումներուն մէջ լաւ չպատրաստուած աշակերտներուն համար առիթ կը տրուի իրենց պատրաստութիւնները լրացնելու համար ամառնային դպրոցի մը մէջ, որ այս տարի Յուլիս 16ին կ'սկսի:

Յառաջիկայ դպրոցական տարեշրջանին համար տարեվճարները՝ կարգերու համեմատ՝ 25, 35 և 40 Սուրիական ոսկի (Թղթադրամ) պիտի ըլլան: Գիշերօթիկ մը պէտք է վճարէ 125 Սու. Ոսկի: Հոկտեմբերին դպրոցը մըտնելու համար պէտք է կարելի եղածին չափ կանուխ դիմում մը կատարուի Տնօրէնին հետեւալ հասցէով. Բ. Բ. 287 Հապպ: Ուէ մէկ պահանջմագիրին սիրով պիտի պատասխանուի:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

ՄԱԿԱՐԱՅԵՑԻ ՅՈՒԴԱՅԻ ՔԱՋ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ
Բ

Այս կռիւներուն մէջ Յուդա Մակաբայեցիի և իւր եղբայրներուն քաջութիւնը այնքան մեծ եղաւ՝ որ ամբողջ տարի մը թշնամին չուզեց ունէ նոր յարձակումի ձեռնարկ մը ընել։ Հետեւաբար այն տարին խաղաղ անցաւ։

Հետեւեալ տարին Լիսիյաս անձամբ եկաւ սակայն ինք ևս պարտուեցաւ։

Եւ վերջապէս Յուդայի կեանքին ամենէն տխուր, միանգամայն ամենէն մեծ օրը հասաւ, երբ ան յանդգնեցաւ իր մարդոցմով Երուսաղեմ երթալու և տաճարը գրաւելու։ Աքրայի անառիկ բերդը՝ որ տաճարին տիրող ժայռի մը վրայ շինուած էր՝ տակաւին Սելեւեանց ձեռքն էր, և Յուդա չէր կրնար զայն գրաւել։ Սակայն ինք ու իր մարդիկը այնքան կը սիրէին տաճարը՝ որ անկէ հեռու չէին կրնար մնալ, ուստի ամեն վտանգ աչք առնելով Սիօնի լեռը ելան ու տեսան որ տաճարին պատերը փլած, դռները այրուած եւ քահանաներու տեղերը աւերակ եղած էին, ու Եհովային զոհ մատուցանելիք սեղանին վրայ կուռքերու զոհի սեղան մը կանգնուած էր։ Այս կտրիճները՝ որ երեք բանակներ փախուստի մատնած էին՝ այս տեսարանին չի կրցան դիմանալ, գետին ինկան, երենց զլուխներուն վրայ հող ցանեցին՝ ու սուրբ տեղերուն աւերակաց վրայ բարձր ձայնով լացին։

Ու այս սուգի միջոցին Յուդա ելաւ, փոքր հնչեցուց, իր խումբը կազմակերպեց, ա-

մենէն քաջերը պահապան դրաւ, որ Սելեւեաններու վրայ հսկեն, և բերդէն ըլլալիք յարձակումներուն զիմադրեն։ Միւս կողմէն ամենէն հաւատարիմ քահանաներուն յանձնեց տաճարը մաքրելու ու նորոգելու գործը։ Կարճ ժամանակի մէջ ամեն բան կարգի մը տաւ, տաճարին նորոգուելիք մասերը նորոգուեցան, կուռքի սեղանը փլցուցին, ու նոր սեղան մը կանգնեցին։ Վերջապէս երեք տարուան կործանումէն վերջ տաճարը նորէն մաքրագործուեցաւ, նորոգուեցաւ, ուրախ երգեր սկսան լսուիլ դարձեալ, և փառարանութեան օր մը որոշուեցաւ՝ որը Հրեաները կը պահեն մինչև այսօր։ Տաճարին ժայռը ամրացուցին, քաղաքին պարիսպները շինեցին, այնպէս որ ան կրնար դիմադրել թշնամիին յարձակմանց, և անկէ ետքը երկու տարիներ Մակաբայիցւոց կեանքին ամենէն յաջող տարիներն եղան։

Այն տարին Հրէից ամենամեծ թշնամին, Անտիոքոս Եպիփանէս Պարսկաստանի մէջ մեռաւ, և իր որդին ահագին բանակով մը Յուդայի վրայ քաշեց՝ անոնց ապստամբութիւնը ջախջախելու համար։ Սարսափելի էր անոր բանակը։ Հնդկաստանէն 30 հազար պատերազմի փիղեր բերած էր, իւրաքանչիւրին վրայ արուեստական բերդ մը՝ 32 մարդով և իւրաքանչիւր փիղի ետեւէն 1000 հեռեակ և 500 ձիաւոր զօրք։ Այս ահագին բանակով թըշնամին յարձակեցաւ Յուդայի մարդոց վրայ, որոնք փոքրիկ բանակով մը իրենց նորաչէն բերդին մէջ ապաստանած էին։

[Շարունակելի]

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԿՐԱԿԱՆ

Դասխարակներու Պոսթ

Տ. ձ. Խ.

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

Ճշմարիտ Երանութիւնը

ՎՏԱԿ

Բրիստո և Դեղստուէս

ԹԱՐԳՄ. Տ. ձ. Խ.

Հաղպի Հայ Աւետ. Եկեղեցիի Պատմութիւնը

ՎԵՐ. Կ. Յ. Յ.

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ

Լիւաձ Բարը

ԹԱՐԳՄ. Պ. Լ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Կրօնաբարոյական, Դիտական, Կրթական երկչարաթաթերթ։

Արտօնատէր, Վեր. Կ. Յարութիւնեան Պատասխանատու Տնօրէն, Տ. ձ. Խրլոքեան ԲՍԺՆԵԿԻՆ

Սուրիոյ համար տարեկան 2 Խէճիս
Արտասահման » » 1 Տոլար

Հասցէ—

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287
ALEP SYRIE